ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
АДМИНИСТРАЦИИ
АРМАВИРСКОГО
МАРЗПЕТАРАНА

0901 Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.2 42 62
Ֆաքս /0237/ 2 - 42 - 62

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 42 -62
Факс. 010/ 28-06-46

<<08>> 09 2017թ. N 02/04/3764-14

Ձեր 201 թ. ---------- N ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Անանյան**

Ի պատասխան Ձեր 01.09.2017թ. N ԳԲԽ-ՄԱ/1/15994-17 գրության՝ հայտնվում է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ընդունված ԳԲԽ-ԱՄ-2017/28 որոշման կատարման նպատակով <ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6> ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով՝ դադարեցվել է պայմանագիր կնքելու որոշումը, մերժվել է նույն չափաբաժինների մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից <Սյունիք> ՍՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը:

Հայտնում ենք նաև, որ կայքում հրապարակվել է 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել 06.09.02017թ-ից մինչև 15.09.2017թ՝ 10 օրացուցային օր:

Կից ներկայացվում է 06.06.2017թ. հայտարարված <ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6> ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 01.09.2017թ. և 05.09.2017թ. կայացրած նիստերի արձանագրությունները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. Կ.Դանիելյան
Հեռ.՝ /0237/ 2 13 77

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

01.09.2017թ.

Ք.Արմավիր

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Դանիելյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ռ.Երվանդյան

Ա.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պողոսյան

**«ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ԲԸՀ ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման մասին**

1.1 «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատման հանձնաժողովը հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 01.09.2017թ ԳԲԽ-ԱՄ-2017/28 բողոքի մասով ընդունված որոշումը, դադարեցնում է «ԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

1.2 Հանձնաժողովը քննարկեց «Սյունիք» ՍՊԸ-ին փաստաթղթեր ներկայացնելու պահանջի մասին հարցը, և հիմք ընդունելով վճարման պահանջագրի մասով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը, որոշեց մերժել «Սյունիք» ՍՊԸ-ի ներկայացված հայտը:

1.3 Հանձնաժողովը որոշեց, որակավորման չափանիշները հիմնավորող, իրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղերի զբաղեցրած 2-րդ չափաբաժնի մասով <<Լույսի Արեգ>> ՍՊ և 5-րդ չափաբաժնի մասով <<Արթմաշին>> ՍՊ ընկերություններին:

Նիստը սկսվել է 2017թվականի սեպտեմբերի 1-ին ժամը $17^{00}$-ին Արմավիրի մարզպետարանի շենքում (ք.Արմավիր, Աբովյան 71)

1.4 Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Դանիելյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ռ.Երվանդյան

Ա.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պողոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«ԱՄ-ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

Ք.Արմավիր 05.09.2017թ.

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Դանիելյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ռ.Երվանդյան
Ա.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պողոսյան

**«ԱՄ-ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով ԲԸՀ ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման մասին**

1.1 «ԱՄ-ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատման հանձնաժողովը ուսումնասիրելով որակավորման չափանիշները հիմնավորող, հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը՝ որոշեց ընտրված մասնակիցներ ճանաչել 2-րդ չափաբաժնի մասով <<Լուսի Արեգ>> ՍՊԸ-ին և 5-րդ չափաբաժնի մասով <<Արթմաշին>> ՍՊԸ-ին:

1.2 Ընտրված մասնակիցների հետ պայմանագրերը կկնքվեն օրենքով նախատեսված անգործության ժամկետը /06.09.2017թ-15.09.2017թ/ լրանալուց հետո:

Նիստը սկսվել է 2017 թվականի սեպտեմբերի 05-ին ժամը $10^{30}$-ին Արմավիրի մարզպետարանի շենքում (ք.Արմավիր, Աբովյան 71)

1.3 Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Դանիելյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ռ.Երվանդյան
Ա.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պողոսյան